



- Մեր մասին
- Բանավեճ
- Ակումբ
- Հոդվածներ
- Մամուլ
- Սոց. հարցումներ
- Հղումներ
- Հետադարձ կապ

01 01
2006

ԱՍՈՒԼԻՄ՝ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱ ԱՐԱՄՅԱՆ, ԱՐԴԷՆ ՇԵԼԵՖԵԱՆ, ԿԱՐԱՊԵՏ ՏԱՔԷՍԵԱՆ, ԱՇՈՏ ԱՍԼԱՆՅԱՆ, ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Մարտի 19-ին <<Հայելի>> մամուլի ակումբում հյուրընկալվել էին Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության հիմքի վրա 21-րդ դարի համահայկական դպրոցի հիմնման նախաձեռնող խմբի անդամներ Մեսրոպ քահանա Արամյանը, Արդեն Շելեֆեանը, Կարապետ Տաքեսեանը, Աշոտ Ասլանյանը և Մարտիրոս Մինասյանը:

Վարդղ.-Բարև՝ ձեզ, շնորհակալություն հրավերն ընդունելու համար, մեր հյուրերն են Մեսրոպ քահանա Արամյանը, Արդեն Շելեֆեանը, Կարապետ Տաքեսեանը, Աշոտ Ասլանյանը և Մարտիրոս Մինասյանը: Խոսելու ենք Մելքոնյան (Մելգոնյան) կրփահամալիրի հիմնախնդրի շուրջ: Խնդրեմ, ներկայացրեք, որն է խնդիրը:

Տեր Մեսրոպ.-Մենք այսօր խոսելու ենք կրթության մասին և դրա մեջ որոշակի լուրջ, բեկումնային փոփոխություններ առաջացնելու վերաբերյալ: Բոլորիդ հայտնի է, թե այսօր ինչ է կատարվում ընդհանրապես կրթության ոլորտում, և ինչ է իրենից ներկայացնում այսօր հայկական դպրոցը թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Այսօր չկան արդի դարաշրջանի շնչին և զարգացումներին համապատասխան դպրոցական գործող համակարգեր Հայաստանում և Սփյուռքում, և, որպես կանոն, մեր դպրոցներից դուրս են գալիս ոչ մրցունակ և համաշխարհային կրթական չափանիշներին չհամապատասխանող երիտասարդներ: Լինելով աշխարհով մեկ սփռված ժողովուրդ՝ հայ ժողովուրդը չունի մեկ միասնական պատկեր և գիտակցություն, թե ինչպիսիք կրթական համակարգ է ինքն ուզում ունենալ, որ մի կողմից համապատասխանի այսօրվա համաշխարհային չափանիշներին և մյուս կողմից էլ համապատասխանի իր՝ համաշխարհային ազգ լինելու հանգամանքին: Մենք ուզենք, թե չուզենք, աշխարհով մեկ սփռված համաշխարհային ժողովուրդ ենք՝ զանազան տեղական ենթամշակութային շերտերով և այլն, և իրար հասկանալու, միասնական գործելու մեկ միասնական նպատակակետ ունենալու և հայաստանակենտրոն առանցքների շուրջ ընդհանրապես մեր մարդկային ռեսուրսն աշխատացնելու խնդիր ունենք: Եվ սա լուրջ մտահոգություն է, որովհետև հարց է՝ ընդհանրապես հայ

Շուկայ
Վերջին թարմացումը
29.03.10 ԱՍՈՒԼԻՄ՝ ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ ԵՎ ՄԵՆՈՒԿ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
27.03.10 ԱՍՈՒԼԻՄ՝ ՍՈՏՅԱ ՆԱԿԱՍԱՐԴՅԱՆ
26.03.10 ԱՍՈՒԼԻՄ՝ ԼԵՎՈՆ ԱՆԱՆՅԱՆ, ԱՆՈՒՇ ՎԱՐԴԱՆՅԱՆ, ՌՈՒԶԱՆ ՏՈՒՆՅԱՆ
27.03.10 ՆՈՐԱՅԵՎՈՒԹՅԱՆ ՏԵՆԴԵՆՏԵՐԸ ԶԱՅԱՍՏԱՆ ԵՆ ԶԱՄՆՈՒՄ ԵՐԵՎ ՏԱՐՈՒՄ
26.03.10 ՍԵՐՈՒԼԻԸ ԳԻՏԱԿՑՈՒՄ Է ԳՐԹԻ ԱՐԾԵԸ
26.03.10 ԿԱՆԱՆԱՏԵՍՈՒՄ ԵՆ ՄԱՍՆԱԳԵՏԵՐԸ
05.02.10 ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
26.12.09 ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԸ ՏԵՂՈՒՄ ԾԱՆՈԹԱՅԵԼ Է ԿԱՌՈՒՅԿՈՂ ՆՈՐ ԴՊՐՈՏԻ ՇԵՆՔԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԻ ԸՆԹԱՑՔԷՆ
26.12.09 ԴԱՏԱՎԵՐՈՇ ԶՈՒԿԱՐԻ 19-ԻՆ
06.02.10 ԱԼԻԵՎԻ ՈՒ ԵՎՐՈՆՅՈՒԶԻ ՎԵՃԸ
24.12.09 ԱՄՆ ՏԱՆԱԶՈՒՄԸ ԲԱՏԱՌՎՈՒՄ Է
23.12.09 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍ



ժողովուրդն ի՛նչ առանցքի շուրջ պետք է համախմբվի, և այս սերունդն ի՛նչ ունի փոխանցելու հաջորդ սերնդին, որովհետև եթե մենք որևէ բան չունենք փոխանցելիք, ապա հաջորդ սերունդը բարոյագրկվում է և իրագործվելու այլ հնարավորություններ է փնտրում: Իսկ այդպիսի հնարավորություններ հավատացեք, որ ընձեռվում են, և դրանք բավականին ճոխ են: Այլ կերպ ասած՝ մեր ազգի գոյատևման խնդիրը 21-րդ դարի բուռն զարգացումների մեջ, կրթական զարգացումների մեջ համախմբվելն է կրթության առանցքի շուրջ: Դարեր շարունակ հայ ժողովրդի գոյատևումը, գոյությունը խարսխված է եղել կրթության և հոգևոր-ազգային արժեքների վրա: Դրանով ենք մենք գոյատևել: Մի անգամ սուրբ թարգմանիչները Մեսրոպ Մաշտոցի գլխավորությամբ կատարեցին այդ գերագույն հոգևոր, մշակութային, ազգային հեղաշրջումը մեր կյանքում, և 1500 տարի է՝ մենք այդ թարգմանչաց ավանդի վրա նստած ենք: Այսօր այդ ամենը վերաիմաստավորելու և վերաարժեքավորելու խնդիր ունենք մեր առջև դրված: Մենք տարբեր առիթներով շատ ենք խոսել կրթության մասին, զանազան քննարկումներ, դուք, հավանաբար, լսել եք <<Արև>> կրթական ակումբի ծրագրի մասին, որ մենք Հայաստանում պատրաստվում ենք այդպիսի բարձր, միջազգային չափանիշների դպրոց կառուցել, և այդ ամենը ծնունդ է առել հենց այս մտահոգությունից: Այդ նույն մտահոգությունից նաև ծնունդ է առել Մփյուռքում միջազգային հայկական դպրոց ստեղծելու ծրագիրը: Մեր ուսումնասիրությունները, դիտարկումները... Նաև բոլորիս համար ակնհայտ է, որ Մելգոնյան կրթական հաստատությունն իր բազմամյա հարուստ ավանդով, իր շրջանավարտների հսկայական փառանգով, իր աշխարհագրական շատ բարենպաստ տեղակայությամբ ունի լավագույն հիմքերը, հնարավորությունները, որպեսզի այդ միջազգային հայկական դպրոցն իրագործվի այդ տարածքի , այդ հիմքի վրա:

Վարդդ.- Հիմա փակված է, չէ՞, ի՞նչ է տեղում:

Տեր Մեսրոպ.- Որպեսզի պատկերացնեք՝ Մելքոնյանի տեղում հիմա ժամանակավորապես գործում է հունական մի դպրոց, տրված է ժամանակավոր վարձակալության: Մենք մի քանի անգամ այնտեղ եղել ենք, այնտեղ հայոց մեծերի կիսանդրիներն են, որոնց վրա հույն աշակերտները հիմա նկարում են, ներկեր են քսում և այլն: Այնտեղ են Մելքոնյան եղբայրների գերեզմանները.. Հիմա խնդիրը դրված է այսպես՝ վաճառքի է դրված այդ տարածքը:

Վարդդ.- Պետությամբ սեփականությունն է առայժմ:

Տեր Մեսրոպ.- Ոչ, պետության սեփականությունը չէ, այսպես ասենք՝ ինքը հայ ժողովրդի սեփականությունն է, բայց հայ ժողովուրդը լիազորել է կոնկրետ հաստատության: Ի սկզբանե եղել է Պոլսո

պատրիարքության ենթակայության տակ, եթե ես չեմ սխալվում, հետո Պոլսո պատրիարքությունն այն հանձնել է Հայ բարեգործական ընդհանուր միությանը՝ տնօրինելու: Հիմա ֆինանսական զանազան խնդիրների և այլ խնդիրների պատճառով որոշում է կայացվել վարժարանը փակել և այդ տարածքները վաճառել: Սա է պատմությունը: Հիմա ժամանակավորապես մի հունական դպրոց է գործածում բուն շենքերից կարծեմ մեկը, թե երկուսը: Բայց ընդհանրապես մտայնությունն այն է, որ տարածքը վաճառվի: Խնդիրը շատ ավելի խորն է և շատ ավելի լուրջ է, քան այդ տարածքի վաճառել-չվաճառելը կամ այդտեղ հատկապես անել կամ չանել: Երբ մենք խոսում ենք Մելգոնյան հաստատության մասին, դրա ավանդների, դրա հիմքի մասին, մենք նկատի չունենք սոսկ ֆիզիկական հիմքը: Դա ուղղակի այսօր անհրաժեշտություն է: Ոչ միայն մեկ, այլև մի քանի այդպիսի դպրոցներ ունենք:

[Վարդ.-Ուր թվականին է փակվել:](#)

[Տեր Մեսրոպ.-2005 թ.:](#)

[Վարդ.-Հիմա արդեն կա նախաձեռնող խումբ: Այն ի՞նչ նպատակ է հետապնդում:](#)

[Ա. Շելեֆեան.-Կուզեի մի բան ավելացնել հայր Մեսրոպին այդ առումով, որ այդ տարածքն այսօր վիճելի տարածք է սա առումով, որ Հայ բարեգործական ընդհանուր միությունը իրեն հատուկ պատճառներով փակած է այդ դպրոցը՝ հակառակ, որ 2004 թ. կար 250 աշակերտ: Այդ տեսակ դպրոց մը ողջ-ողջ թաղված է: Եվ դրա տեղն իրենք ուզած են վաճառել: Հարցը կտակի մը արդյունքն է, այսինքն՝ այդ կտակը, այդ դպրոցը ժամանակին տրված էր Մելքոնյան եղբայրներու կողմեն, և մեկ նպատակ ուներ, այսինքն՝ իբր դպրոց օգտագործվի: Քանի որ Կիպրոսի մեջ գիները բարձրացած են, իրենք այդ համոզումին եկած ենք, որ դպրոցն այլևս տեղ չունի հայկական իրականության մեջ, այն պետք է վաճառել և գանձել որոշ գումար: Հիմա իրականությունն այն է, որ քանի որ հոնտեղն ունի իր պատմությունը և նկատված է իբր պատմական տարածք, 40 կամ 50 տոկոսն այդ տարածքին և ամենակարևոր մասը Կիպրոսի կողմն արգելակ դրված է իբր վաճառքի, այսինքն՝ չեն կարող հոնտեղ այդ շենքերը փլել կամ ատ դամբարանը, ինչպես կըսեն՝ ատ գերեզմանը Մելքոնյան եղբայրներու, և սարքել, ըսենք, հյուրանոց: Ազատ տարածք մը չէ վաճառքի համար: Սա է այսօրվան կացությունը:](#)

[«Արմենիա».-Բավականին հավակնոտ ծրագիր է, միջոցները որտեղից էք մտածել հայթայթել, դիմե՞լ էք, արդյոք, Հայաստանի կառավարությանը: Եվ երկրորդ հարցը՝ պարզապես դպրոց ասելով՝](#)

մի քիչ անհասկանալի է, այն ի՞նչ կրթություն է տալիս հայաստանյան հասկացողությամբ՝ միջնակա±րգ, թե± բարձրագույն:

Վարող.-Եվ յետո ինչու± փակվեց, որովհետև աշակերտնե±ր չկային, թե± որովհետև միջոցներ չկային: Պատճառն ի՞նչ էր:

Ա. Շելեֆեան.-Մենք ձեզ ասացինք, որ 250 աշակերտ կար այդ ժամանակին, և ես կուզեի, որ ավելի մանրամասն այդ բացատրություններն ըլլան: Պրն Կարապետ Տաքէսեանը, որ այդ թվականին եղած է փոխտնօրենը Մելքոնյան վարժարանի...

Տեր Մեսրոպ.-Մի վայրկյան, ես նախաձեռնող խմբի մասին ձեզ պատմեմ, որպեսզի ձեզ համար հասկանալի լինի, թե ինչ մանդատ ունենք և ինչ ենք պատրաստվում անել: Նախաձեռնող խումբը միավորում է զանազան գործարարների Կիպրոսի, Շվեյցարիայից, Ռուսաստանից և Հայաստանից, որոնք ունեն լրջագույն տրամադրվածություն և որոշում ներդրում կատարելու Մելքոնյան կրթական հաստատության վերաբացման պարագայում: Բացի դրանից, նաև բենք դիմել են այդ կրթական հիմնադրամին, որպես կրթության ոլորտում լուրջ ծրագրեր իրականացնող փորձագիտական կազմակերպության, որպեսզի Մելքոնյանի համար նորովի վերամշակվի՝ եղած հիմքի վրա, կրթական ծրագիր, կրփական ամբողջ պլանը, նաև գործարար ծրագիր մշակվի այդ դպրոցի փորձարկման համար: այնպես որ, այստեղ մի լավ պահ կա այս ամբողջի մեջ, որ և՛ կան ներդրում անելու պատրաստակամություն ունեցող մարդիկ, և՛ կան կրթության գիտակ կազմակերպություն և անհատներ, որոնք պատրաստ են այսօր նոր բովանդակություն մատակարարել դպրոցի վերաբացման պարագայում:

<<Արմենիա>>.-Ի՞նչ մակարդակի է կրթությունը:

Կ. Տաքէսեան.-Նախ՝ ի՞նչ է եղել Մելքոնյան կրթական հաստատությունը, պրն Տաքէսեանը կարող է այդ հարցին պատասխանել:

Կ. Տաքէսեան.-Անհրաժեշտ կնկատեմ շատ հակիրճ Մելքոնյանին պատմության մասին քանի մը տեղեկություններ փոխանցել, որոնք իմաստալից են կրթական կյանքի պատմության համար: Երբ Մելքոնյան եղբայրներ իրենց հնարավորությունները կընծայեն նոր սերունդի այդ ժամանակվա համար, այսինքն՝ Ցեղասպանությունե փրկված երեխաներու դաստիարակության համար, արդեն իրենց մտքին մեջ կար, եթե քիչ մը թեքնիկ արտահայտությամբ ըսեմ, հանրապետական դպրոցի ստեղծման գաղափար, այսինքն՝ առանց պետականություն ունենալու այդ հաստատություն ստեղծող միտքը

հանրապետական էր: Հանրապետական կրսեմ այն իմաստով, որ երբ երեխաները կյանքի ճակատագրին բերումով բնական զարգացման հնարավորությունները չունեին, Մելքոնյանն այդ շնորհեց: Հետո, անշուշտ, պատմության և ժամանակի հոլովույթի հետ միասին Մելքոնյան կրթական հաստատությունն իր կողքին ընդունեց այն երիտասարդները, որոնք կկրթվեին Սփյուռքի տարբեր վայրերու մեջ, որ քաղաքական, ընկերային, տնտեսական տազնապի բներումով կրկին հայ երիտասարդները հնարավորություն չունեին լավագույն և ժամանակակից կրթություն ստանալու: Եթե այդ երկրի մեջ ներքին պատերազմ կար, ուրեմն՝ այդ շրջանեն երիտասարդներ կուգային, կամ եթե վարչական փոփոխությունեն կային, որ թույլատու չէր ազատ մտքի, ազատ մտածողության, ազատ զարգացման, Մելգոնյանը հույսի դուռ էր մերի երիտասարդների համար: Խորհրդայինն Միության անկումեն էտ, երբ ստեղծվեցան, ահյունվեցան ավելի ճիշտ նոր գաղութներ, ուր կար չքավորություն. Մելգոնյանը կրկին իր դռները բացավ այն երիտասարդներուն, որոնք իրենց գտնված երկրի մեջ չէին կրնար ստանալ...

Վարդ.-Նան Հայաստանից եկած երիտասարդները:

Վ. Տաքէսեան.-Անշուշտ, անոնց մեջջ կայինն նան ազատամարտիկներու զավակներ: Հետևաբար վերջին շրջանը պարզապես բնութագրեմ, վերջին շրջանը եղավ այն շրջանը, որ մենք իրար ճանչցանք: Այսինքն՝ հայ երեխան, եթե հայաստանին կգտնվեր, բացահայտեց, որ կան հայեր, որոնք իրեն չեն նմանիր, կամ Բուլգարիայեն եկած երեխան Հայաստանը ճանչցավ հայաստանեն եկած երեխաներու միջոցավ: Այսինքն՝ մեր իրականությունը դիմագրավելու մարտահրավերը ստանձնեց Մելգոնյան կրթական հաստատությունը, այսինքն՝ իրարով ճանաչման, փոխճանաչման իմաստով: Հետևաբար, ամփոփելով այս հանգրվանները և գալով ուրիշ հանգրվաններ, բայց ես չեմ ուզեր ժամանակ խլել, Մելգոնյանի կյանքն ուղղակի կապված է մեր կրթական կյանքի, մտածողության հետ: Դա ոչ թե պարզ, տրամաբանական հաշվարկ է, այլ իմաստ ունի Մելգոնյանը, և այդ իմաստն արդեն կներշնչե նան մեր ներկա նախաձեռնությունն ապագայի համար:

Ա. Շելեֆեան.-Ես կուզեի մեկ բան ավելացնել, պրն Տաքէսեան, դա այնպիսի հաստատություններեն մեկն է, որ սփյուռքյան կյանքի մեջ ունի մեծ ավանդ, այսինքն՝ ոչ միայն իբրև տարածք, այլ իբրև անուն, իբրև կրթության մակարդակ: Հիմա կան որոշ բաներ կյանքի մեջ, որ չեն կարող վաճառել: Այսինքն՝ Ֆրանսան չի կրնար Սորբոնը վաճառել: Կան սրբություններ, որոնք պետք է պահպանվին և պետք է ավելի արդիական դառնան:

Վարող.-Բացի վերաբացվելուց, անհրաժեշտություն է լինելու, որ այդ բարերաններն անընդհատ աջակցեն, ֆինանսավորեն, չէ՛, որպեսզի դպրոցն աշխատի:

Ա. Շելեֆեան.-Չէ...

Վարող.-Ուրեմն՝ ինչպե՞ս է:

<<Արմենիա>>.-Երեխան ի՞նչ մակարդակի կրթություն է ստանալու:

Տեր Մեսրոպ.-Մակարդակի մասին որ հարցնում եք, միանշանակ պատասխանեմ՝ Մելքոնյանի տված կրթությունն ունեցել է շատ բարձր մակարդակ, շրանավարտներն ընդունվել են Օքսֆորդ, Քեմբրիջ, հարվարդի համալսարան, աշխարհի լավագույն համալսարանները: Դա միջազգային չափանիշներով շատ բորձրորակ կրթական հաստատություն է եղել: Իհարկե, այդ ամենը նորացնելու, նոր խոսք ասելու, նոր կրթական տեխնոլոգիաներ բերելու անհրաժեշտությունն, իհարկե, եղել է, բայց ինքը եղել է մեր լավագույն կրթական հաստատություններից մեկը:

Վարող.-Տասնամյա՞ կրթություն է եղել:

Տեր Մեսրոպ.-Ինքը եղել է ավագ դպրոց և միջին դպրոց, բայց հիմնականում ինքը գործել է որպես ավագ դպրոց: գալով ֆինանսավորման խնդիրներին...

Վարող.-Այս տարի վերաբացման համար կա՞ն արդեն միջոցներ:

Տեր Մեսրոպ.-Ես կարծում եմ, որ այսօր մեր այս խումբը, որ այստեղ ներկա է, նաև իրենք որոշակի ներդրողների, ինքն ի վիճակի է ստեղծելու այն նվազագույն հիմքը, որի վրա մենք կարող ենք հավաքել որոշակի գումար և վերաբացել: Բավականին լուրջ դրամական հիմք այսօր վերաբացման համար ես կարծում եմ, որ ապահովված է: Ինչ վերաբերում է դպրոցի ճակատագրին, որովհետև բոլորին այս հարցը հուզում է՝ ցանկացած բարերարի... Հավատացե՛ք՝ բարերարը երբեք փող չի դնի, եթե իմանա, որ այդ դպրոցը դառնալու է իր համար ֆինանսական աղետ, ինքն անընդհատ պիտի փող տա պահելու համար: Եվ Բարեգործականն էլ դա դիտել է որպես իր հիմնական պատճառներից մեկը փակելու պարագայի, թեպետ կտակի հարցն էլ կա, թե կտա՛կն ինչ է եղել՝ Մելքոնյանների թողած կտակը: Պետք է ստեղծվի համապատասխան մեխանիզմ, և մենք այդ ուղղությամբ աշխատում ենք, որպեսզի տաղանդավոր երեխաների կրթաթոշակավորման ինստիտուտն իսկապես հայկական աշխարհում աշխատի, որպեսզի պատվաբեր դառնա սովորող երեխային կրթաթոշակ հատկացնել, ինչպես այսօր

դրսում դա լայնորեն տարածված է: Այսինքն՝ այս կամ այնգործարարը, այս կամ այն կազմակերպությունը կարող է ստանձնել 1-2-3-4-5 կրթաթոշակ: Դպրոցի խնդիրն է՝ իսկապես հայտնաբերել լավագույն երեպաներին, աստղերին, մոտիվացիա ունեցող երեխաներին, որոնք իսկապես ուզում են սովորել, և գտնել համապատասխան բարերաների, որոնք պատրաստ կլինեն դառնալու այդ երեխայի (երեկ մի լավ եզր հորինվեց) կրթահայրը: Ամբողջ աշխարհում սա աշխատում է: Այնպիսի հաստատություններ, ինչպիսին MIT-ն է՝ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտը, Հարվարդի համալսարանը, երբ որ իրենք մարդ են ընտրում, իրենք չեն նայում այդ մարդու ֆինանսական կարողություններին, բայց մարդը, որ մտավ այդ հաստատություն, իրեն կրթաթոշակ տվողները հերթ են կանգնած, պատիվ են զգում այդպիսի մեկին կրթաթոշակ տալու: Մենք մեր հայկական կրթությունն էլ պետք է բարձրացնենք այս մակարդակի վրա: Մեր հանրային քննարկումները, որ մենք արել ենք այս խնդրի շուրջ Գործարարների միության հետ, բավական լուրջ քննարկումներ ենք արել: Պատկերացրեք, որ մարդիկ պատրաստակամ են, և խանդավառվում են այդ գաղափարով այդ գործարարները: Եվ այսօր արդեն մեր կրթական հանգույցի պարագայում կան լուրջ խոստումներ այս կամ այն քանակով կրթաթոշակների, որովհետև մենք ցույց ենք տալիս, որ մենք այս երեխային վերցնում ենք, պատրաստում ենք, և այս երեխան ո՛ր է գնում հասնում և ինչպիսի՝ մարդ կարող է դառնալ և ի՛նչ նշանակություն ապագայում կարող է ունենալ երկրի համար:

Ալիսա Գևորգյան, <<Հանրային ռադիո>>.-Տեր Մեսրոպ, նշեցիք, որ ֆինանսական հարցերը լուծված են, բայց ինչքան հասկացա՝ իրավական առումով խնդիրներ կան, կխնդրեի հստակեցնել: Եվ ընդհանրապես՝ ի՞նչ աշխատանք է սկսվելու, հատկապես եթե խոսքը համահայկական կրթության մասին է, վերանայվելու են կրթական ծրագրերը, կարծում եմ, և ու՞մ հետ է դա համաձայնեցվելու., Հայաստանը մի կրթական համակարգերով է աշխատում, Սփյուռքը՝ այլ: Արդյոք կրթական համակարգն այս պահին ինչքանո՞ւ է հստակեցված: Նաև այս ծրագիրը կյանքի կոչելու համար այս պահին ի՞նչ խնդիրներ ունեք:

Տեր Մեսրոպ.-Անշուշտ, տարածքի հարցը, այսինքն՝ հողի և շենքերի հարցը լուծված չէ, և դա բանակցային խնդիր է: Իրավաբանական կարգավիճակը դեռևս լուծված չէ...

Վարդդ.-Մնում է Բարեգործականի՞ն:

Տեր Մեսրոպ.-Այո, դեռևս իրենց իրավասության ներքո է, և դա բանակցությունների խնդիր է, և հուսամ, որ այդ բանակցությունները

դրական արդյունք կտան: Տան, թե չտան դրական արդյունքներ, ցանկալի է, որ այդ խնդիրը հնարավորինս հեշտ լուծվի, բայց եթե չլինեն, ես կարիսում եմ, որ այս գաղափարն ինքնին այնքան հասունացած գաղափար է, որ այլ տեղակայում է անպայման ունենալու:

Ա. Շելեֆեան.-Իրավաբանական հարցը կա հոստեղը երկու կողմ, նախ՝ կան Կիպրոսի պետությունը և իր բարձրաստիճան օրգանները, և կա Հայ բարեգործական ընկերությունը, որը տեխնիկապես ատ տարածքի տերն է:

Վարդ.-Ի՞նչ է նշանակում տեխնիկապես:

Ա. Շելեֆեան.-Այսինքն՝ ինքը կադաստրում արձանագրված է իբր այդ տարածքի տերը՝ օրինականապես: Բայց հարցն ի՞նչ է. քանի որ սա ունի համակիպրական իմաստ, Կիպրոսի կառավարության համար այն ուրիշ նշանակություն ունի, այսինքն՝ բարդ տարածք մը վաճառելու և հոնտեղը հյուրանոցային կամ թե օֆիսային կոմպլեքս մը սարքելու հարցը չէ, հոնտեղը կան շատ ուրիշ պատճառներ: Պատճառն այն է, որ նախ՝ մեյ մը կա հոնտեղը պատմական երկու շենք՝ դպրոց: Կան գերեզմաններ և արձաններ: Եթե իբր հայ էրթաք հոնտեղ, կներշնչվիք՝ Նարեկացի, Անդրանիկ Զորավարի, բոլորի արձանները...

Վարդ.-Իսկ հնարավոր է՞ մեկը դպրոց լինի, մյուսը վարձակալության տալ և այդ միջոցներով...

Ա. Շելեֆեան.-Գիտե՞ք, դրանք բոլորը մանրամասնության հարցեր են: Ի՞նչ էր Բարեգործականի պատրվակը՝ աշակերտ չկա, հայ ուսումը հոս տեղը տեղ չունի...

Վարդ.-Բայց դա լուրջ պատճառ է...

Ա. Շելեֆեան.-Մի բոպե, սա էլ ուր հարց է, եթե դուք ուզում եք մի հաստատություն ուժեղացնել և դարձնել արդիական, դուք աշակերտ կգտնաք, բայց եթե դուք չեք էլ հետաքրքրված դպրոց դեկավարելու, ուրեմն՝ դուք ամեն միջոց կձեռնարկեք, որ այնտեղ նոր աշակերտի...

Տեր Մեսրոպ.-Այսօր հայերը Թայլանդ են գնում սովորելու սովորելու: Այսօր 50 երեխա ունենք գործարարների, երբ մենք հանդիպեցինք, հայ կրթական հանդեսի ներկա ծրագիրն էինք քննարկում, ներկա գործարարների երևի 80 տոկոսի երեխաները սովորում էին Թայլանդի դպրոցում: Ի միջի այլոց, նրանցից մի մասի երեխաները նաև ժամանակին սովորել են Մելբուրնում: 3 տարվա ընթացքում 4 հոգուց քանակը Թայլանդի դպրոցում բարձրացել է 50 հոգու, և 150

հոգի էլ հերթ են կանգնած գնալու համար:

Վարդ.-Ինձ հետաքրքիր է՝ դա իրենց անգործությամբ նշանն է, թե՞ միտում կա, որ հետագայում դա իբրև կրթօջախ չգործի և ծառայի այլ նպատակներին:

Ա. Շելեֆեան.-Հարցը հետևյալն է, որ այսօր իրենք ասում են՝ մենք հետաքրքրված չենք ուսում տալու, այսինքն՝ Բարեգործականն ինքը չի ուզում այդ գործը: Մենք ասում ենք իբրև հայ կազմակերպություն, որ մենք այդ նախաձեռնությունը կարող ենք ստեղծել, իրենց հետ պայմանագիրներ անելով՝ այդ ուսումը գետնի վրա դնելու:

Տեր Մեսրոպ.-Նմանօրինակ առաջարկ, հնարավորություն դեռ մինչև մեր առաջարկություն անելը Բարեգործականը չի ունեցել, որևէ մեկն իրենց չի եկել ասել՝ մենք պատրաստ ենք...

Վարդ.-Դուք համաձայնե՞լ եք, որ տեխնիկապես նորից մնա իրենց լիազորության տակ, բայց դուք...

Տեր Մեսրոպ.-Դրանք բանակցային հարցեր են, շատ կարևոր հարցեր են, բայց այդ խնդիրները, ես կարծում եմ, բանակցությունների արդյունքում կլուծենք: Կարևորը, որ ինքը գործի որպես դպրոց՝ լիարժեք կերպով: Մենք բացարձակապես հետաքրքրված չենք, որ դա լինի մեր սեփականությունը, թող դա լինի Բարեգործականի սեփականությունը, Բարեգործականը թող դա տա տնօրինման այն մարդկանց, ովքեր հետաքրքրված են կրթությամբ, կարող են ներդնել, կարող են որակյալ բովանդակությամբ մատուցել:

Ալիսա Գևորգյան, <<Հանրային ռադիո>>.-Համահայկական կրթօջախ է կոչվելու, ի՞նչ ծրագրով կաշխատի դա:

Տեր Մեսրոպ.-Այդ ծրագրերը բազմազան են, և ամեն կրթական հաստատության համար հատուկ իր ծրագիրը պետք է մշակվի: Հայաստանյան ծրագիրը կարող է Մթյունքում գործող կրթական ծրագրից տարբերվել, որովհետև ամեն տեղ կան նաև որոշակի տեղային պահանջներ, լիցենզավորման խնդիրներ և այլն: Այս ամենը պետք է մեկ տեսլականի և մեկ տեսլական գաղափարախոսության մեջ ամփոփել, հասկանալ, թե մենք արդյունքում ի՞նչ ենք ուզում ստանալ, ինչ արժեքներ, ինչ մարտահրավերներ դիմագրավող, ինչ չափորոշիչներ բավարարող...

Ալիսա Գևորգյան, <<Հանրային ռադիո>>.-Ռեզոնանսային ծրագիր իր հիմքում դնու՞մ է դպրոցը:

Տեր Մեսրոպ.-Անպայման, ամենալուրջ: Մեր կրթական

հիմնադրամը, որպես բովանդակության մատակարար, այսօր շատ լուրջ քայլեր է այդ ուղղությամբ անում: Մենք աշխատում ենք համաշխարհային կրթության մեծագույն անունների հետ: Եթե դուք ուզում եք տեսնել 21-րդ դարի կրթությունն ինչպես պետք է իրագործել, գնացեք ֆիզմաթ դպրոց, մեր կառուցած լաբորատորիաները տեսեք, դրանք գեղեցիկ դեկորացիաներ չեն: Այսօր որևէ ավագ դպրոց եթե ասի, որ ինքն ուզում է լաբորատորիա ունենալ, մենք լրիվ կնախագծենք իրենց համար, մեկ միասնական համակարգի մեջ կդնենք: Ուսուցիչների վերապատրաստման կենտրոն է դա այսօր դարձել, օլիմպիական թիմերի վերապատրաստման կենտրոն է դարձել: Երբ էկոնոմիկայի նախարարությունն ուզում էր հեռահար ուսուցման ծրագիր իրականացնել, միակ տեղը, որտեղից դա կարող էր անել, մեր լաբորատորիաներն էին: Եվ եթե հիշում եք՝ նախագահն էլ այցելեց և երեխաների հետ այնտեղ օպտիկայի փորձեր արեցին: Շատ գեղեցիկ միջոցառում էր: Երեկ էլ 40 հազար երեխա մասնակցել է մեր կազմակերպած մրցույթին, որ աննախադեպ բան է: Մեր կրթության չմոտիվացված համակարգում իսկապես մի ամբողջ մանկական շարժման էր դա վերածվել: Գործը պետք է լավ անել, նաև մեծ պատկերի տեսողություն պետք է ունենալ՝ ինչ է այսօր աշխարհում կատարվում: Մենք «մենք ենք, մեր սարերը» եղանակով չենք կարող շարժվել:

Ալիսա Գևորգյան, «Հանրային ռադիո».-Բարեգործականի հետ կոնֆլիկտն, ինչքան հասկացա, այնքան էլ խորը չէ, այդ±:

Ա. Ասլանյան.-Կոնֆլիկտ չկա: Մեր ասելիքն այն է, որ մենք կոնֆլիկտ չունենք: Մեզ հետ կոնֆլիկտ չկա: Գոյություն ունի մեր հայ իրականության մեջ Մելգոնյան երևույթը: Սա դրոշ է, այդ դրոշն այսօր պատառոտված է և նետված է ոտքի տակ: Ինչ-որ մեկը, ով պատրաստ է գալ բարձրացնել, նա գալիս է և ասում է՝ ես եմ և պատրաստ եմ...

Վարդդ.-Ինչ-որ ժամանակ դպրոցն իր նպատակին ծառայում էր, հիմա հայրենիք ունենք, կարող ենք այդ դպրոցը հայրենիքում...

Մ. Մինասյան.-Կարելի է± պատասխանել Ձեր հարցին: Մելգոնյան կրթական վարժարանի մասին այստեղ շատ բան ասվեց, բայց կան մի քանի շատ գրավիչ փաստեր, որ ես ուզում եմ, որ բոլորդ տեղյակ լինեք: Հայերը Կիպրոսում եղել են 7-րդ դարից և ընդունված են դպրոցում կիրքն ազգային փոքրամասնություն, որի իրավունքները պահպանված են այդ երկրի սահմանադրությամբ: Այսօրվա օրով Կիպրոսում տարբեր ազգություններ կան, միայն Ռուսաստանից 30-40 հազար մարդ է ապրում, ընդ որում է հայկական գաղութը 2-3 հազար է: Արևմտահայերեն լեզուն լիազորված է պահպանման

Եվրախորհրդով Կիպրոսի մեջ: Այսօր օրենքով Եվրոպառլամենտն ընդունել է, որ արևմտահայկական լեզուն պետք է պահպանվի, և Կիպրոսը լիազորված է, երաշխավորված է, որ այդ բանը պետք է տեղի ունենա: Այսինքն՝ մենք ունենք մի երկիր, որտեղ հայերը պահպանված են օրենքով, որտեղ արևմտահայերեն լեզուն պետք է զարգանա: Ունեցել ենք մի կրթօջախ, ի միջի այլոց ասեմ, որ կիպրացիների համար մեծ պատիվ էր սովորել Մելգոնյանում, և հիմա շատ հարցումներ են գալիս, և մենք փորձում ենք խուսափել պատասխանից, թե ինչու± ենք փակում, ինչպե՞ս կարելի է փակել այդ գանձը: Թե ինչու± այնտեղ, ոչ Հայաստանում, արևմտահայկական լեզուն պետք է պահպանվի Սփյոռքում: Եվ դա եղել է համար մեկ ուսումնական հաստատություն: Խոսքն այն մասին է, որ այդ հաստատությունը նորից գործի:

Ա. Շելեֆեան.-Այո, մի բան ավելացնեմ, ճիշտ է, Հայաստանը պետք է ուժեղանա իր ունեցած բոլոր հաստատություններով: Բայց սփյուռքյան իրականությունը մենք կկարծենք, որ մնայուն իրականություն է, այսինքն՝ չենք կարող մտածել օր մը՝ իդեալ օր մը, որ ամբողջ հայ ժողովուրդը հավաքվի Հայաստանում: Մենք դարձել ենք այլևս միջազգային ժողովուրդ: Սա եմր ճակատագիրն է, մեր կացությունն է: մենք պետք է պահպանենք սփյուռքյան իրականությունը՝ ուժեղացնելու համար հայրենիքը: Եվ արևմտահայերեն լեզուն և իր սպեցիֆիկը Հայաստանի մեջ կարոտ չէ լինելու, ինքը Հայաստանն ունի իր լեզուն, իր հիմքերը, իր գրականությունը: Բայց իբր միջազգային ազգ մեր հաստատություններով ուժեղ լինենք: Ունենք միջազգային մակարդակի հաստատություններ, երբ դրանք ուժեղացնենք, մեր դրա մեջ կարող ենք վաղը-մյուս օրը նույնիսկ օտարներ ուսանիլ, և դառնան մեր դեսպանները, ինչպես եղել է: Այսինքն՝ մենք չենք ուզում, մի Մելգոնյան բանալ, որ հինին նման ըլլա, պետք է լինի շատ ավելի բարձր մակարդակով: Եվ առ առումով որոշ սփյուռքահայեր՝ ուժեղ անձնավորություններ, և հայր Մեսրոպը կորիզ մը ստեղծեցինք, որն իսկապես ամեն մի հայ, որ ունի միջոց մասնակցելու, կարող է մասնակցել: Այսինքն՝ սա կորիզն է, կազմակերպչական կոմիտեն է: Կուզեի մի բան ևս ավելացնել: Ինչու± Կիպրոսը, որովհետև ժամանակին Բարեգործականի ընդհանուր ասածներուն մեջ ան էր, որ գիտե՞ք՝ Միջին արևելքի հայկական գաղութները նվազել են: 20 տարի առաջ Կիպրոսը Եվրամիության մեջ չէր, մ այսօր Եվրամիության մեջ է, և այսօր եթե դուք առնեք իբր գեոգրաֆիա և իբր քաղաքական կացություն, իդեալ տեղն է այդպիսի դպրոցի: 700 հազար հայ Եվրամիության մեջ ապրում են, մի 4-5 հարյուր հազար ապրում է Միջին Արևելքում, Հայաստանը 3 մլն, 2 մլն Ռուսաստանի գաղութ մը կա, որտեղ ոչ մի հայկական հիմնարկ չկա, բայց բավական ռուսահայ ընտանիքներ ապրում են Կիպրոսում և ուզում

են իրենց երեխաները ծնել: Այսինքն՝ սա կարող է համահայկական հոյակապ կենտրոն դառնալ:

Ա. Ասլանյան.-Շատ կարևոր է, որ այդ հարցի շուրջ և Սփյուռքի, և՛ Հայաստանի, Ռուսաստանի ներկայացուցիչները գործում են որպես մեկ, այսինքն՝ գործում են հանուն մի նպատակի, որը միավորում է իրենց որպես ազգ, ոչ թե իրենց առանձին նպատակներով են գործում են, որոնք հարմարեցնում են և այլն, այլ ես ուզում եմ սա հատուկ նշել, որ հարց չկա, որ ռուսաստանցին ասում է՝ գիտե՞ք, մենք մի քիչ հարմարվենք, մեզ նեղենք ու Կիպրոսում մի դպրոց ստեղծենք: Այսինքն՝ այստեղ հարցն այնպես է, որ ռուսաստանցի լինի, հայաստանցի, թե մյուսը, դիտում է այս հարցը որպես իր սեփական հարց, իր՝ որպես միջազգայի ազգի, որը նկրտում ունի միջազգային հարցերում դեր խաղալու, իր շահերն ունենալու միջազգային արենայում և այլն:

Ալիսա Գևորգյան, <<Հանրային ռադիո>>.-Եթե բանակցային գործընթացն ավարտվի և դրական էլք ունենա, տա Աստված, ե±րբ կսկսվի դպրոցի վերաբացման գործընթացը, և առաջին անելիքները որո±նք են լինելու:

Տեր Մեսրոպ.-Առաջին անելիքները լինելու են լրիվ արդիականացնել ամբողջ եղած շենքային պայմանները, լրիվ վերանորոգման մասին է խոսքը, զինել դրանք արդիական լաբորատորիաներով, գրադարաններով, կոմունիկացիաներով, արդիական շնչին համապատասխան պայմաններ ստեղծել, իդեալական պայմաններ ստեղծել երեխաների կացության համար, այսինքն՝ բարձր մակարդակի հանրակացարան, հանրակացարանը լիովին վերանորոգման կարիք ունի, սպորտային համալիրներ... Մի խոսքով՝ այն ամենն, ինչ անհրաժեշտ է 21-րդ դարի դպրոց ունենալու համար:

Ալիսա Գևորգյան, <<Հանրային ռադիո>>.-Դա ե±րբ կարող է լինել:

Տեր Մեսրոպ.-Անմիջապես, երբ որ մենք համաձայնությունը ստացանք, մենք պատրաստ ենք վերանորոգման աշխատանքներն այնտեղ սկսել: Բնականաբար, զուգահեռ դրան, համապատասխան մշակված կրթական ծրագրին արդեն ընտրվում է ուսուցչական կազմ, համապատասխան աշխատանքներ են տարվում մեր գաղութներում, որոնք պոտենցիալ թիրախներ են երեխաներ ներգրավելու համար և այլն: Սկսում ենք նորմալ աշխատանք... Բայց աշխատանքը սկսվում է վաղը, ոչ թե բանակցությունների ավարտին:

Կ. Տաթևեան.-Մադրիդեն մինչև Մոսկվա մոտավորապես երկուսուկես մլն հայ կա: Մեր Սփյուռքի մեջ, մանավանդ՝ արևմտյան

աշխարհի մեր արտագաղթեն մինչև հանգրվանը մաթեմատիկ որոշ ճշգրտությամբ է, որ կընթանա, այսինքն՝ 50 տարի ետք՝ երկու սերունդ ետք, եթե յուրաքանչյուր սերունդ 25 տարի նկատենք, ինքնության կորուստը 1/50-րդ է, այսինքն՝ ես սխալ արտահայտեցի, 50 ընտանիքեն միայն մեկը հայու ինքնություն կստանձնի: Եթե այս չափանիշը շարունակվի, ուրեմն՝ ասկե 50 տարի ետք հայերու այսօրվա թիվը կնվազի: Քանի որ մեր ժողովրդին 2/3-ը կապրի Սփյուռքի մեջ, մենք չենք կրնա այս իրականության տակ հարցերը պարզ տրամաբանությամբ լուծել, կառուցային տրամաբանությամբ լուծել, որում միակ երաշխիքը դպրոցն է: Չմոռնանք, որ վերջին հաշվով 17-18-րդ դարեն ետք, աշխարհի նոր գաղափարներուն մենք ծանոթացանք՝ շնորհիվ մեր սփյուռքյան կամ այլ դպրոցական կառույցներու: հետևաբար՝ Մելգոնյանը պարզապես գումարի կամ շենքի և այլնի հարց չէ, այլ՝ մեր գոյության համար ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր: մելգոնյանը մաղթենք, որ դառնա այդ ուղղությամբ առաջին օրինակը:

Տեր Մեսրոպ.-Նաև ես որպես ամփոփում ասեմ, որ երբեք չի կարելի շարժվել այն մտայնությամբ, որ այնտեղ փակենք, գնանք Հայաստանում մեկ-երկու դպրոց բացենք տեղական և այլն: Գիտե

Տեր Մեսրոպ, մենք գետոյացման այս հոգեբանությունից պետք է ազատագրվենք: Մեր ամբողջ հոգեբանությունը խարսխված է գետոյացումների վրա՝ լինի Սփյուռքում, լինի... Մենք չունենք համաշխարհային թոփչքին համապատասխան կրթական պատկերացումներ և միջավայրեր: Խնդիրն այն է, որ դրա՛ն մենք պետք է համապատասխանենք, դրանի՛ց պետք է ձերբազատվենք: Այդ տեղական, մանր-մունր լուծումներով բան չի ստացվի: Հրեաներն ունեն իրենց կրթական բրենդը, Անգլիայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում բացում են: Թուրքերը բացել են արտասահմանում 1000-ից ավելի դպրոց դպրոց վերջին 20 տարվա ընթացքում:

Կ. Տաթևեան.-2000 դպրոց՝ 110 երկրի մեջ, և իրենց այդ դպրոցներու ցանցի նյութական հնարավորությունները 25 մլրդ դոլար են:

Տեր Մեսրոպ.-Դուք սրա դեմ ի՞նչ եք անելու, ինչպե՞ս եք գոյատևելու որպես ազգ, երբ դուք մի հատ դպրոց բացելու ի վիճակի չեք, պատկերացում չունեք, թե ինչ է միջազգային դպրոցը: Այսօր թուրքը Փարիզի սրտում կառուցում է դպրոց և ֆրանսիացիներին բերում է սովորեցնում է թուրքական մշակույթ և թուրքերեն լեզու: Այդ փոքրության կոմպլեքսից պետք է ազատագրվել: Մենք պետականություն չենք ունեցել, շուտով ապրիլին, դուք կտեսնեք, շնորհանդեսը կլինի <<Արարատից Սիոն>> ֆիլմի, ես այդ ֆիլմի սցենարի հեղինակն եմ, մենք պետականություն չենք ունեցել, բայց մեր պապերը եղել են համաշխարհային մտածելակերպի ազգ:

Կանգնած ենք եղել աշխարհի հզորների կողքին, աշխարհի հոգևոր կենտրոնում, չե՛նք վախեցել ոչ մի բանից: Եկեք կրկին վերարթնացնենք մեր հայրերի ոգին, որպեսզի շարունակենք իսկապես որպես լիարժեք ժողովուրդ: